

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018 թվական

N \_\_\_\_\_-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը  
**ո թ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի  
փետրվարի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս ամուսնություն  
գրանցելու համար ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք տալու կարգը և  
պայմանները հաստատելու մասին» N 94 որոշմամբ հաստատված հավելվածի ձև N 1-ը  
շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
տասներորդ օրը:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՄԱՀԱԿՅԱՆ



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք  
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_ թ.

N \_\_\_\_

Քաղաքացի \_\_\_\_\_  
(անունը, հայրանունը, ազգանունը)

ծնված՝ \_\_\_\_\_ թ., իր բնակության վայրի՝ \_\_\_\_\_, ԲԿԱԳ-ի տարածքային բաժնի արխիվում ամուսնության ակտի գրանցում չի հայտնաբերվել:

Ստուգվել է \_\_\_\_\_ թ-ից մինչև \_\_\_\_\_ թ.:

Միաժամանակ \_\_\_\_\_  
(անունը, հայրանունը, ազգանունը)

հայտարարել է, որ չունի ամուսնության գրանցում որևէ այլ ԲԿԱԳ-ի մարմնում, և չկան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ամուսնության կնքման արգելք հանդիսացող այլ հանգամանքներ: Նա նախազգուշացված է ԲԿԱԳ-ի մարմիններին սուտ տեղեկություններ տալու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության մասին:

Տեղեկանքն ուժի մեջ է վեց ամիս:

Կ.Տ.

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա.ԼԱԶԱՐՅԱՆ**

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

|           |   |
|-----------|---|
| <b>1.</b> | <b>Ընթացիկ իրավիճակը և անհրաժեշտությունը</b>  |
|           | <p>Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մշտապես բնակվող, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս ամուսնություն գրանցելու համար ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը տալիս է տեղեկանք /այսուհետ՝ տեղեկանք/, որը տպվում է հասարակ սպիտակ թղթի վրա: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի N 94 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ ընդունումը նպատակ ունի նոր ձևաթղթով տեղեկանքի տրամադրման միջոցով խուսափել վերոնշյալ տեղեկանքի կեղծումից:</p> |
| <b>2.</b> | <b>Առաջարկվող կարգավորման բնույթը</b>   |
|           | <p>Նախագծով առաջարկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մշտապես բնակվող, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս ամուսնություն գրանցելու համար տրամադրել տեղեկանք՝ նոր ձևաթղթով, որը իրենից ներկայացնում է ավելի հաստ A4 ֆորմատի սպիտակ թուղթ, որի վերևի ձախ անկյունում զետեղված է դրոշմ՝ արդարադատության կշեռքի տեսքով:</p>  |
| <b>3.</b> | <b>Ակնկալվող արդյունքը</b>  |
|           | <p>Որոշ դեպքերում արտասահմանյան երկրներում գտնվող ՀՀ դեսպանություններից Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն ուղարկվում են հարցումներ նախարարության կողմից տրված տեղեկանքի իսկության ստուգման վերաբերյալ և արդյունքների տրամադրման ժամկետների տեսանկյունից խնդիրներ են առաջացնում քաղաքացիների համար:</p> <p>Նոր ձևաթղթով տեղեկանքի տրամադրումը կբացառի վերջիններիս կողմից տեղեկանքների կեղծումը, ինչպես նաև դրանց իսկության վերաբերյալ կատարված հարցումների անհրաժեշտությունը, ինչը կհանգեցնի վարչարարության նվազեցմանը:</p>   |
| <b>4.</b> | <b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b>   |
|           | <ol style="list-style-type: none"> <li>1. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ԶԿԱԳ և նոտարիատի գործակալություն</li> <li>2. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժին</li> </ol>  |
| <b>5.</b> | <b>Այլ տեղեկություններ</b>  |

|  |  |
|--|--|
|  | <p>Նախագիծն օրենսդրությամբ սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում, որի արդյունքում առաջարկություններ չեն եղել:</p> |
|--|--|

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2008 թվական փետրվարի 26-ի N 94 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՁԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2008 թվական փետրվարի 26-ի N 94 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի պահանջում:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

**ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվական փետրվարի 26-ի N 94 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը համապատասխանում է Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, հավասար և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

**ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՆԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

**Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018թ.

## ԱՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹ

**Որոշման նախագծի անվանումը** – «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվական փետրվարի 26-ի N 94 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

**Նախագիծը ներկայացնողը** - Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն

### ԱՅ կառավարության որոշումն ուղարկել`

1. ԱՅ արդարադատության նախարարություն
2. ԱՅ ֆինանսների նախարարություն

### Նախագիծը պատրաստողը`

1. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժին

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018թ.

\_\_\_\_\_  
Ստորագրություն

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ  
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝**

| ԳԳ | ՇԱՀԱԳՐԳԻՈՒ ՊԵՏԱԿԱՆ<br>ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ   | ՂԵԿԱՎԱՐԻ<br>ԱԶԳԱՆՈՒՆԸ | ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ | ԹՎԱԳՐՈՒՄԸ |
|----|--|-----------------------|-----------------|-----------|
| 1. | ԱՅ պետական նախարար   | Գ.Մարտիրոսյան         |                 |           |
| 2. | ԱՅ Նախագահի<br>աշխատակազմի<br>կառավարության գործերի<br>կառավարչության պետ-<br>աշխատակազմի ղեկավարի<br>առաջին տեղակալ | Ա. Լազարյան           |                 |           |
| 3  | ԱՅ ֆինանսների<br>նախարարություն  | Ա.Հարությունյան       |                 |           |

**Առաջարկությունները և առարկությունները՝**

---



---



---



---



---



---



---

**Նախագիծը ներկայացնողը՝**

**ԱՅ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018թ.